

նով հրատարակուած Պատմութեան, բայց կը ներկայացնէ այնպիսի մանրամասնութիւններ, որ կը պակսին զինքը կանխող աղբիւրներու մէջ: Ինքն ալ իր կարգին իրր աղբիւր ծառայած է յաջորդ պատմիչներու, որոնք իրմէ քաղած են այդ մանրամասնութիւններ. այսպէս է Ստեփանոս Աստղիկ (+ 1004), որ ունի սակայն նորութիւններ ալ Մայրավանեցիի գրական գործունէութեան մասին: Յոսիան Մամիկոնեան¹¹ կը խօսի միայն Կարինի ժողովի նկատմամբ: Սամուէլ Անեցի (1100-1190)¹² ուրիշներու աղբիւրութեան տակ է, բայց ունի անկախ մանրամասնութիւններ. այսպէս կ'աւանդէ թէ Մայրավանեցիի Սարգիս աշակերտին մօլորութիւնը իրր 645ին երեւան ելած է: Վարդան Վարդապետ Պատմիչ (1200-1271)¹³ եւ Կիրակոս Գանձակեցի (1200-1271)¹⁴ կը կրկնեն նախորդ գրողներու ըսածները: Գանձակեցի սակայն աւելի ճշիւ է մէջբերելով հրաշագործութեան ժողովրդական զրոյց մը: Ստեփանոս Օրպելեան պատմիչ (+ 1304-5)¹⁵ ծանօթ է թէ՛ պատմագիրներու ըսածներուն եւ թէ՛ «Պատմութիւն Յոհաննու Մայրագումեցոյ» գրութեան. միայն ամէն բան կը պատմէ աւելի կշիռ տալով Սիւնիքի վարդապետարանին կատարած դերին. կը մէջբերէ նաեւ նամակ մը Քրիստոսի երկու բնութեանց հարցին շուրջ, իրր գրուած Մաթուսաղա Սիւնեցի քերթողէն, ու եզր կաթողիկոսի կողմէ գրկուած Հերակլ կայսեր:

Յաջորդաբար եկեղեցական պատմական զէպքերու մասին գրողներ, յիշատակած են նաեւ Կարինի ժողովը, եւ որով նաեւ Յոհան Մայրավանեցիի նկատմամբ: Այսպէս Զաքարիա Ծործորեցի, Արտաղի Ս. Թաղէոս վանքին առաջնորդը ու թեմին եպիսկոպոսը իր յօրինած Պատմութիւն ժողովոյն գրութեան մէջ: Նմանապէս Խորէն Սահառունի իր ժամանակագրութիւն Վարդապետաց Հայոց գրութեան մէջ. այս երկու գրութիւններն ալ ծառայած են Հ. Մ. Զամէանի Պատմութեան գրքին համար եւ հիմա անյայտ են¹⁶: Զաքարիա Ծործորեցիի «Պատմութիւն

Թիւն ժողովոյ» գրութիւնը կը ճանչնայ նաեւ Ստեփանոս Ռոշթա իր Ժամանակագրութիւն գրքին մէջ¹⁷:

Յոհան Մայրավանեցիի մասին մեր ձեռքը հասած օտար լեզուով ամենահին աղբիւրներէն է Պատմութիւն Գործոց Հայոց կոչուած գրութիւնը՝ յունարէն լեզուով, եւ որու քննական հրատարակութիւնը կատարած է 1952ին Prof. Gérard Garitte¹⁸ բացատրական մեկնութեամբ: Հրատարակողին քննութեամբ եւ տեսութեամբ այս գործը թարգմանութիւնն է հայերէն գրութեան մը, որու բնագիրը չարագրուած ըլլալու է 700ի ատենները: Իրապէս գրութիւնը կը վերջանայ Յոսատինիանոս Բ.ի (685-714) Բիւզանդիոնի մէջ Սահակ Գ. Զորավորեցի կաթողիկոսին (678-705) պարտադրած կրօնական միութեամբ: Սակայն երբ Կաթողիկոսը Հայաստան կը վերադառնայ՝ 690ին, կը մերժէ այս միութիւնը. գրութեան վերջին մասը կարծես գրուած է Սահակի կողմէ կատարուած այս յետս կոչումին պատճառած աղբեցութեան տակ: Յունարէնը հայերէնէ թարգմանուած ըլլալուն

11. Յովհաննու Մամիկոնեցիի Պատմութիւն Տարօնոյ. Վենետիկ Ս. Ղազար, 1832. էջ 43:

12. Սամուէլի Քահանայի Անեցոյ Հաւաքումի ի գրոց պատմագրաց. հրատ. Արշակ Տէր-Միքէլեանի. Վաղարշապատ, 1893. էջ 80:

13. Վարդանայ Վարդապետի Հաւաքումի Պատմութեան. Վենետիկ Ս. Ղազար, 1862:

14. Կիրակոսի վ.ի Գանձակեցոյ Համառօտ Պատմութիւն ի Սրբոյն Գրիգորէ յաւուրս իւր. Վենետիկ Ս. Ղազար, 1865:

15. Ստեփանոս Օրպելեան Արքեպ.ի Սիւնեաց Պատմութիւն Նահանգին Սիւնեաց. Փարիզ, 1859. Ա. հատոր, էջ 156-162:

16. Հ. Միխայէլ Զամէան. Պատմութիւն Հայոց. Հատոր Բ. Վենետիկ Ս. Ղազար, 1785. էջ 535-544:

17. Հ. Յակոբոս Տաշեան. Յուցակ Հայերէն Զեռագրաց Մատենագրարանի Միթարեանց ի Վիեննա. Միթ. տպարան, 1895. էջ 681, ա. սիւն:

18. La «Narratio de Rebus Armeniae». Edition critique et Commentaire par Gérard Garitte. Louvain. Libr. L. Durbecq. 1952:

փաստերը բաղմամբիւ են, ու կարելի է տեսնել Կարիթի հրատարակած հատորին մէջ, էջ 382-400, ինչպէս նաեւ յունարէնի թարգմանութեան ժամանակը. գրութիւնը ուղղուած է հայերու եւ ոչ յոյներու (էջ 359): Իրր երկրորդ աղբիւր ունինք Փոտ Պատրիարքի (858-867 եւ 878-886) գրած նամակը մեր Զաքարիա Ա. Կաթողիկոսին (855-876)¹⁹: Փոտի ծանօթ է Պատմութիւն Գործոց Հայոցը եւ կը համառօտէ անոր պատմածները. բայց ունեցեր է նաեւ ուրիշ աղբիւր մըն ալ: Երրորդ աղբիւր ունինք Արսէն Սափարացի վրաց կաթողիկոսին գրութիւնը Վրաց եւ Հայոց բաժանման մասին²⁰ իններորդ դարէն: Արսէն Սափարացի ալ կը քաղէ Պատմութիւն Գործոց Հայոցէն, բայց մէկ քանի կէտերու մէջ աւելի ընդարձակ է ու տարբեր մանրամասնութիւններ կ'աւանդէ. այսպէս յունարէն Պատմութիւն Գործոց Հայոցին եւ Արսէն Սափարացիի գրութեան մէջ կան կէտեր, որ կը գտնուին մէկուէն մէջ ու կը պակսին միւսին՝ եւ փոխադարձաբար. Արսէն Սափարացի Յունաստան կը գրկէ Մայրավանեցիին, ինչ որ չենք գտներ յունարէնին մէջ. յունարէն Պատմութիւն Գործոց Հայոցը կը ներկայացնէ Կոմիտաս Կաթողիկոսը հեղինակ ըլլալ դաւաբանական զրքերու, ինչ որ որոշ չէ Սափարացիի մէջ: Կարիթ կը խորհի թէ երկուքն ալ ունեցած ըլլան միեւնոյն հայ բնագիրը, բայց աւելի ընդարձակ՝ քան մեր ձեռքն հասած Պատմութիւն Գործոց Հայոցի յունարէնը, եւ այդ նախնական հայ բնագիրն երկուքն ալ քաղած ըլլան՝ իւրաքանչիւրը իր նպատակին եւ տեսակէտներուն համաձայն. իսկ Արսէն Սափարացի աւելցուցած է նաեւ իր խորհրդածութիւնները: Այն հասարակաց աղբիւրը, ուսկից օգտուած են Պատմութիւն Գործոց Հայոցի յունարէնը ու Արսէն Սափարացի, հաւանորէն տարբեր է հայ պատմագիրներէ գործածուած աղբիւրներէն: Պէտք է յիշել նաեւ Կղեմէս Գալանոսի գործածած անանուն Ժամանակագրութիւնը Կարինի ժողովի զէպքերուն մասին²¹:

Այս այլեւայլ աղբիւրները դարձեալ կարելի է երկու խումբերու դասել՝ նկատելով գրողներու նպատակը եւ գրուածքին յայտնաբերած նկարագիրը. Քաղկեդոնականներ ու հակաքաղկեդոնականներ: Մեր բոլոր պատմագիրները հակաքաղկեդոնական տրամադրութիւն մը ցոյց կուտան եւ նպատակ ունին մէկ կողմէ Կարինի ժողովին չընծայել պաշտօնական կերպարանք ու անոր արդիւնները նկատել աղետաւոր՝ Հայ Եկեղեցոյ համար. միւս կողմէ ալ պանծացնել Յոհան Մայրավանեցիի գիտութիւնը եւ կատարած դերին մեծութիւնը. անոր անձն ալ կը ներկայացնեն սրբութեան լուսապսակով: Իսկ քաղկեդոնական ձկտումով գրուած աղբիւրները, որոնք օտար լեզուով հասած են մեզի, ցոյց կուտան Կարինի ժողովին մէջ պաշտօնական հանդամանք մը, եւ իրագործուած կրօնական միութիւնը կը նկատեն հետեւութիւն՝ լրջօրէն ու բանաւոր կերպով կատարուած քննութեան մը, յոյներէ ներկայացուած հաւատքի հանդանակին. իսկ Յոհան Մայրավանեցիին ալ կը ճանչնան մօլեռանդ մը լեցուած հակառակութեան հոգիով, հերձուածող մը ու փառասէր անձ: Պատմութիւն Յոհաննու Մայրագումեցոյ՝ հայ լեզուով հասած ամենահին աղբիւրը, աղղայիններ

19. Յօտայ Պատրիարքի առ Զաքարիա Կթ. Հայոց Մեծաց. Զեռագիր թիւ 764 Մատենագրարանին Ս. Ղազարու, Վենետիկ, էջ 132:

20. Պրոֆ. Գր. Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց Աղբիւրները Հայաստանի եւ Հայոց Մասին. Հատոր Ա. Հրատ. Մեկրեան Գոնգի, Երեւան, 1934:

21. Միքայել Ս. Եկեղեցոյն ընդ Մեծի Ս. Եկեղեցոյն Հոռովայ. չարագրեալ ի յերկուս հատորս ի Կարգէ Թէառնոսաց Կղեմէս Վարդապետէ. երկրորդ հատորին Մասն Ա. Հոռ. տպ. Sacrae Congr. de Propaganda Fide. 1658, էջ 113-117. Գալանոս կ'օգտագործէ անանուն յոյն գրութիւն մը՝ անուանով Combefisէ Փոտ Պատրիարքի նամակը՝ ուղղուած մեր Զաքարիա Կաթողիկոսին, ու եւթիմիոս Զիկապեոսի Panoplia զերբը, ուր կը խօսուի հայերու հերձուածներու մասին ալ:

բէն ամէնէն աւելի առարկայականն է. դրողը կարծես մէկ նպատակ ունի՝ ներկայացնել զէպքերը ինչպէս կը ճանչնայ ինքը, առանց խորհրդածութեան:

Ժամանակը

Յոհան Մայրավանեցիի մասին մեր պատմութեան մէջ կը խօսուի երբ Հերակլ կայսեր ձեռնարկով կրօնական միութեան հարցը կրկին երեւան կ'ելլէ՝ Եզր Կաթողիկոսի դահակալութեան շրջանին: Սերէոսի անունով հրատարակուած Պատմութեան զիրքը խօսելով հանդերձ այդ միութեան շուրջ, չի յիշատակեր Յոհան Մայրավանեցիի անունը: Գուցէ որովհետեւ այդ Պատմութեան զիրքը կը ներկայացնէ կատարուած կրօնական միութիւնը իբր առանձնական արարք մը Եզր Կաթողիկոսին, որ «զնաց ... յերկիրն Ասորեստանի, ետեւ զթագաւորն եւ հազորդեացաւ ընդ նմա օրինօք»²²: Եւ կամ, ինչպէս կը կարծէ Կարիթ, այդ զրքէն վերջուած է Յոհան Մայրավանեցիի անունը: Ես կը համարեմ որ այդ ժամանակ Յոհան ազգեցիկ անձնաւորութիւն մը տակաւին դարձած չըլլայ, որով Սերէոսի անունով Պատմութեան զրքին հեղինակին անծանօթ մնացած: Հետեւաբար իբր հայ լեզուով հնագոյն աղբիւր Մայրավանեցիի մասին՝ կ'ունենանք Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցոյ զրութիւնը՝ Յիշատակարաններու մէջ, հաւանօրէն յօրինուած 700ի առաջին քառորդին, ինչպէս ըսուեցաւ: Իսկ յունարէն լեզուով հասած աղբիւրն է Պատմութիւն Գործոց Հայոց զրութիւնը: Երկուքին մէջ ալ Յոհան Մայրավանեցիի վրայ կը խօսուի Հերակլ կայսեր կողմէ գումարուած Կարինի ժողովին առիթով: Այս ժողովի գումարման տարւոյն նկատմամբ բանասէրներու կողմէ այլեւայլ թուականներ տրուած են. սակայն Պատմութիւն Գործոց Հայոց կը ճշտէ որ ժողովը կը գումարուի Խոսրովի մահուան (+ 628) չորրորդ տարին. Հերակլի թագաւորութեան (610) քսանեւերորդ տարին եւ Եզրի կաթողիկոսու-

թեան (630-1) երրորդ տարին²³: Ստեփանոս Օրպելեան պատմիչն ալ զիտէ որ Եզրի կաթողիկոսութեան երրորդ տարին կը գումարուի Կարինի ժողովը²⁴: Անանիա Շիրակացիի ընծայուած Ժամանակագրութիւնը Կարինի ժողովը կը դնէ՝ ձեռագրերէն համաձայն, Հերակլի իններորդ եւ կամ տասնեւիններորդ տարին, երբ սակայն Եզր գեռ կաթողիկոսական դահը բարձրացած էր. որով կարելի չէ ընդունիլ:

Կարիթ ամէնէն հաւանականը կը համարի Պատմութիւն Գործոց Հայոցի տրուածը, այն է 633-4ը: Այդ ժամանակ Մայրավանեցի այնքան ազգեցիկ անձնաւորութիւն մը պէտք չէ եղած ըլլայ, գոնէ Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցոյ զրութեան համեմատ: Յոյներու ներկայացուցած հաւատքի հանգանակի քննութեան համար ինքը չէ որ կը հրաւիրուի, այլ Սիւնիքի քերթողը Մաթուսաղա, «որ էր զլուսն վարդապետաց Հայոց եւ նմա պատուիրեալ էր Հայոց պատրաստ լինել հանդիսին յորժամ դայցէ թագաւորն»²⁵. Մաթուսաղա կը զրկէ իր Թէոդորոս աշակերտը: Ծիշտ է որ յետոյ Ասպետը կը մեղադրէ Եզր Կաթողիկոսը՝ Մայրավանեցիին կանչած չըլլալուն համար, բայց Եզր կը պատասխանէ, թէ բոլոր ժողովականները ըսին որ երբ Թէոդորոսը կայ՝ ուրիշի ներկայութիւնը հարկաւոր չէ: Ընդհակառակն Պատմութիւն Գործոց Հայոց եւ Արսէն Սափարացի Յոհանի մեծ դործունէութիւն կ'ընծայեն Կոմիտաս Կաթողիկոսի դահակալութեան շրջանին ալ. Արսէն Սափարացի կ'ըսէ թէ Կոմիտաս «առաջին կանոններն ու կարգերը փոխեց, նրանց տեղը դնելով շեղը, որով հինը խանդարեց ...: Եւ այս բոլորը իրաւորեց (Կոմիտաս) Յոհան Մայրագոմեցոյ ձեռքով»²⁶: Սակայն կը խորհիմ թէ

22. Սեբէոսի եպ.ի Պատմութիւն. էջ 102:

23. La «Narratio de Rebus Armeniae». էջ 43:

24. Ստ. Օրպելեանի Պատմ. Սիւնեաց. էջ 156:

25. Յիշատակարանի Զեռագրաց. Ա. հտ. էջ 33:

26. վրաց Աղբիւրները. Ա. հտ. էջ 38:

երկուքն ալ սխալած են: Իրապէս երկու օտար լեզուով աղբիւրներն ալ կ'ընդունին թէ Մայրավանեցի դարձած է իր աքսորէն Անաստաս Կաթողիկոսի (662-668) մահէն վերջ, ըսել է 668էն յետոյ, ու տարիներ վերջ մեռած է շատ ծեր. իսկ Սափարացիի վկայութեան համաձայն՝ Յոհան մեռած է ձԼԳ թուականին, այն է 684ին²⁷: Սափարացիի մեղի ընծայած այս թուականին նկատմամբ տարակուսելու ո'րեւէ հիմ չունինք. թուական մըն է որ հնարելու յատուկ պատճառ եւ նպատակ չունէր. մանաւանդ թէ այդ թուականով առանց անդրադառնալու ինքնիք գրածին կը հակասէ: Ենթադրելով որ Մայրավանեցի ու թսուհամեայ վախճանած ըլլայ, իր ծնունդը պէտք ենք դնել 605ի առեւններ. արդ 605ի ծնունդ մը չէր կարող Կոմիտասի կաթողիկոսութեան (611-628) շրջանին հրապարակի վրայ ազգեցիկ դեր մը կատարել, եւ կամ եկեղեցական ասպարէզին մէջ «զրութեան տէրն եղած ըլլալ»²⁸, ինչպէս կ'ուզէ Կարապետ Եպ. Տէր Մկրտչեան Շոգակաք բացառիկ թրւին մէջ. Կարապետ Եպիսկոպոս մինչեւ իսկ Արարհամ Կաթողիկոսի շրջանին ալ դործօն դեր կ'ընծայէ Յոհանի. ոչ ալ կործօն դեր կ'ընծայէ Յոհանի հաւանութեան «զկաթողիկոսութիւնն հաւատացեալ» կ'ըլլայ Յոհանի, ինչպէս կը զրէ Ասողիկ²⁹: Մեր ձեռքը հասած պատմական այս տուեալներով Հ. Ն. Ակիւնեան կը համարի որ Յոհան ծնած ըլլայ 610ին ու հրապարակ իջած 640ի առեւնները³⁰:

Սերէոսի անունով հրատարակուած Պատմութիւնը տեղեկացնելով Կոմիտաս Կաթողիկոսի Ս. Գրիգոր Կաթողիկէի վեկաթողիկոսի մասին՝ վաղարշապատի բաշխութեան մասին՝ Վաղարշապատի մէջ, կը զրէ. «Այս եղեւ յամս Յովհաննան ինչոպէս երկու սրբոյ կաթողիկէի»³¹: Գիւլանաց երկու սրբոյ կաթողիկէի որ Ս. Հովսիփոսն էր յիշատակարաններէ որ Ս. Հովսիփոսի մէկ եկեղեցին կը վերանորոգուի Խոսրով Ապրուէզի քսանեւիններորդ եւ կամ քսանեւութեան տարին, որ երկու տարեք հաշիւներով միշտ կու տան 618 թուականը³²: Ս. Գրիգոր Կաթողիկէի վերանորոգութիւնը Ս. Հովսիփոսի եկեղեցիի շինութեանն առաջ սկսած է³³: Շատեր նոյն

նացուցած են Ս. Գրիգոր Կաթողիկէի վանքին երէց այս Յովհաննիկը՝ Մայրավանեցի Յոհանին հետ, ինչ որ ընդունելի չի կրնար ըլլալ: Այս Ս. Գրիգոր Կաթողիկէն վաղարշապատինն է եւ ոչ Դուինը, որու նաեւ դահակալ կը ներկայացնեն մեր պատմագիրներէն շատեր Յոհանը՝ Եզր Կաթողիկոսի ժամանակ: Յետոյ 618ին Մայրավանեցի հաղիւ տասներեք տարեկան կրնար ըլլալ. հետեւաբար Ս. Գրիգոր վանքին երէց Յովհաննիկը տարբեր անձ է Մայրավանեցի Յոհանէն: Ծիշտ է որ, ինչպէս վերեւ ըսուեցաւ, Պատմութիւն Գործոց Հայոց եւ Արսէն Սափարացի Յոհանի մեծ դործունէութիւն մը կ'ընծայեն՝ իբր հակաքաղկեդոնական, Կոմիտաս Կաթողիկոսի դահակալութեան շրջանին ալ, ու ապա իբր կատարի հակառակող Եզրի կատարած կրօնական միութեան յոյներու հետ: Սակայն պէտք ենք նկատել որ Կոմիտասի մահուան ժամանակ, այսինքն 628ին, Յոհան հաղիւ քսանեւերեք տարեկան կրնար ըլլալ. արդ այդ տարիքին վերագրել իրեն նման դործունէութիւն մը՝ բանաւոր չէ. ազգային պատմագիրներն ալ արդէն ոչ մէկ ակնարկ ունին Կոմիտաս Կաթողիկոսի իշխանութեան ժամանակ Մայրավանեցիի դործունէութեան նկատմամբ: Ասողիկ միայն կը զրէ որ Կոմիտաս Յոհանի խոստացած էր իր յաջորդութիւնը. Ասողիկ այս կէտը առած պիտի ըլլայ Պատմութիւն Գործոց Հայոցի աղբիւր ծառայող հայերէն բնագրէն, բայց պատմականօրէն կարելի չէ ընդունիլ, ինչպէս ըսուեցաւ: Որով կը համարեմ որ Արսէն Սափարացի եւ Պատմութիւն Գործոց Հայոցի խմբա-

27. Նոյն, էջ 47:

28. Շոգակաք Ս. Էջմիածնի. էջ 110:

29. Ստ. Ասողիկան Պատմ. Տիեզերական. էջ 87:

30. Հանդէս Ամսօրեայ Հայագիտական Ուսումնարար. Վիեննա 1957. Թիւ 11-12. էջ 525:

31. Սեբէոսի եպ.ի Պատմութիւն էջ 89: Սամուէլ Անեցի. Պատմութիւն. էջ 268:

32. Յիշատակարանի Զեռագրաց. Ա. հտ. էջ 25 եւ 29: Շոգակաք Ս. Էջմիածնի. էջ 172:

33. Յիշատակարանի Զեռագրաց. Ա. հտ. էջ 24:

զրոգը ուղած են չափազանցել Յոհան Մայրավանեցիի հակաքաղկեդոնական գործունեությունը, աւելի ցայտեցնելու համար իր հակառակութեան հոգին:

Ինչ ալ ուղենք մտածել, «Պատմութիւն Յոհաննու Մայրապետեցւոյ» գրութեան համեմատ՝ Կարինի ժողովին ալ, այն է զոնէ 633ին, Մայրավանեցի կը ներկայանայ իրր երկրորդական կարեւորութիւն ունեցող անձնաւորութիւն մը. իրմէ կը նախադասուի Մաթուսաղա՝ Սիւնիքի քերթողը, ու ասոր բացակայութեան՝ անոր աշակերտը Թէոդորոսը, որ կ'երեւի պատգամատուն կ'ըլլայ միութեան հարցը վճռելուն մէջ: Յոհան չի հնազանդիր եղր Կաթողիկոսին կարգադրութեան, կը հաւառակի եւ կ'ընդդիմախօսէ: Ներսէս Շիրնոյ Կաթողիկոսին ժամանակ, այն է 342էն յետոյ կը կրէ հալածանք, բանասերութիւն եւ աքսոր, ապահովապէս երբ իր գիրքը աւելի զօրացուցած էր ու համարձակ եւ անսանձ՝ ինքը եւ աշակերտ-

ները սկսած էին տարածել իրենց գաղափարները ժողովուրդին մէջ: Հաւանական չեմ ալ նկատեր որ եղր Ս. Գրիգորի գահակալ անուանած ըլլայ Մայրավանեցին, ինչպէս կ'ուզեն մեր պատմադիրները: Եղր կը ճանչնար անշուշտ Յոհանը. ինքը յարող մըն էր յոյներու, զուցէ համոզումով. իրեն գաղափարակից կը գտնէ Թէոդորոսը՝ եղրորդին Կոմիտաս Կաթողիկոսի, որու քեռորդին էր ինքն ալ. իսկ Յոհան հակառակորդ մըն է յոյներու հետ միութեան: Ապահովապէս եղր պիտի ուղէր իր շուրջը ունենալ գաղափարակիցներ եւ ոչ ընդդիմադիր մը: Յոհանի վանքն ալ Դուինէն զուրս է, Բջնի ծործորներուն մէջ, Մայրոյ կոչուած վայրը: Այս այլեւայլ տուեալները կը հարկադրեն մեզ աւելի լուրջ դատումով ընդունիլ մեր պատմադիրներու աւանդած որեւէ իրողութիւն:

(Շար. 1)

Հ. Կ. ՔԻՊՐԵԱՆ

Վ Ա Ր Ք Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

(Շար. Բազմ. 1962, Սեպտ. - Դեկտ. էջ 208-236)

ՀԱՄԱՐՈՐԳՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ՄԻՋԱԳԵՏՔ

Երբ Մաշտոց Դանիէլեան գրերը անբաւարար գտաւ հայերէն լեզուի բոլոր վանկերը եւ հնչումները ամբողջապէս արտայայտելու, թաղաւորին հրամանով եւ Ս. Սահակի համաձայնութեամբ, ճամբայ ելաւ դէպի Միջագետք, խումբ մը աշակերտներ հետը առած: Բայց թէ ինչո՞ւ Միջագետք գնաց, Կորիւն այդ մասին բան մը չ'ըսեր: Աւելի զարմանալին այն է որ Ս. Խորենացի եւ Դ. Փարպեցի, որոնք Կորիւնի գրածը կարդացած են, այս դէպքին շուրջ բոլորովին տարբեր բաներ կը պատմեն: Ղազար Փարպեցի, ինչպէս ակնարկեցինք արդէն, կը խնայէ Մաշտոցի՝ դէպի Միջագետք ճամբորդութիւնը. եւ ինչ որ Կորիւն կը պատմէ՝ Միջագետքի մէջ Մաշտոցի կատարածներուն մասին՝ Ղազար մերձաւորապէս նոյնը կատարել կու տայ Հայաստանի մէջ, Ս. Սահակի օղնութեամբ: Ղազարի այս կեցուածքը ուրիշ կերպով չի բացատրուիր, բայց եթէ անոր ունեցած հակակրօթեան զգացումովը հանդէպ ասորիներուն, ինչպէս նախապէս ալ ակնարկեցինք: Ընդհակառակն, Ս. Խորենացի՝ իրր գիտնական պատմիչ, հոս ալ կը ջանայ բացատրութիւն մը տալ Մաշտոցի ճամբորդութեան նպատակին շուրջ, պատմելով հետեւեալը. Մեսրոպ անձամբ կ'երթայ Դանիէլի հետ տեսնուելու, որպէսզի անկէ տեղեկութիւններ քաղէ հայերէն գրերու մասին, բայց «ոչ աւելի ինչ գտնալ քան զառաջիկան՝ անցանէ եւ յեղեւիտ առ Պղատուն ոմն, քարտասան հեքանուս, իշխան

դիւանին»: Պղատուն չի յաջողիր օգտակար ըլլալ. սակայն կը թելադրէ անոր՝ գիմել իր նախկին ուսուցիչ Եպիփանին, որ քրիստոնեայ եղած եւ գիւանէն հետը բազմաթիւ գրքեր առած՝ հեռացած էր: Մաշտոց ճամբայ կ'ելլէ զինքը գտնելու, բայց կ'իմանայ թէ վախճանած է. ուստի կը դիմէ անոր աշակերտին, Հռուփանոսի, որ Սամոս առանձնացած էր, եւ հրաշակաւոր դարձած էր «հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեամբ»⁹⁵:

Դժուար է բացատրել թէ Խորենացի ուսկի՞ց գտած է Պղատունի, Եպիփանի անունները, եւ թէ ինչո՞ւ կ'ուզէ որ Հռուփանոս Սամոս առանձնացած ըլլայ: Մինչ Կորիւն յայտնի կերպով Հռուփանոսը Սամոսաւոր մէջ գիտէ: Թէեւ կարելի էր Սամոս անունը Սամոսաւոր աղաւաղում համարել, բայց Խորենացի կարծես կ'ուզէ այդ կասկածը փարատել եւ այդ պատճառով կ'աւելցնէ. «անցեալ ընդ Փիւնիկէ՝ ի Սամոս դիմէ»: Խորենացիի պատմածները յերիւանքներ ըլլալէ աւելի՝ բանասիրական ենթադրութիւններ կրնան նկատուիլ, որոնցմով ան ուղած է լրացնել կամ պատճառները բացատրել Կորիւնի պատմածներուն. նման մեկնութիւններու մենք ալ պիտի ստիպուինք դիմել՝ բացատրելու համար թէ ինչո՞ւ Մաշտոց Միջագետք իջաւ՝ փոխանակ Հայաստանի մէջ հնարելու հայերէն նոր գրերը: Ղազար Փարպեցի ալ այս հարցը գրած է, անշուշտ, եւ աւելորդ գտած՝ Մաշտոցը

95. ԽՈՐ. Գ, ԾԳ.